



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИМЕНИ В. БРЮСОВА  
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ  
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ВЕСТНИК  
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА  
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

---

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ**

**PEDAGOGY AND SOCIAL SCIENCES**

**2 (67)**

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ - 2024**

**ՀԱՄԱԿՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ**  
**«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՍԵՐՎԻՍ»**  
**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ**  
**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՅՈՒՄ**

**ԱՆՆԱ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ**

**Համառոտագիր**

Հոդվածում ներկայացվում է համակցված ուսուցումը՝ որպես անհատականացված, ուսանողակենտրոն, մասնագիտական կոմպետենցիայի ձևավորմանն ուղղված ուսուցման եղանակ:

Դիտարկվում է համակցված ուսուցման կիրառության արդյունավետությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում «Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման գործընթացում:

Հետազոտության շրջանակներում իրականացված հարցման միջոցով բացահայտվել են մասնագիտական առարկաների դասավանդման ընթացքում առկա հիմնական խնդիրները, որոնք մեծամասամբ հնարավոր է հաղթահարել՝ կիրառելով համակցված ուսուցման եղանակը:

**Հիմնաբառեր՝** համակցված ուսուցում, անհատականացված ուսուցում, առցանց և անցանց ուսուցում, կրթական տեխնոլոգիաներ

**Ներածություն**

Վերջին տարիների տեխնոլոգիական նորամուծություններն ստիպում են ոլորտի մասնագետներին ու դասավանդողներին ներդնել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, ուսուցման մեթոդներ և եղանակներ, որոնք կհամապատասխանեն ժամանակի պահանջներին և հիմնված կլինեն մանկավարժության անձնակենտրոն մոտեցման վրա:

Մասնագիտական ուսումնական գործունեությունը ուսումնառողների կողմից ինքնուրույն հետազոտական, վերլուծական գործունեությամբ գիտելիքների ձեռքբերման և դրանք գործնականում կիրառելու գործընթացն է: Կրթության նոր հարցույցը ուսումնառող – դասախոսություն – դասախոս համակարգն է (Պետրոսյան, 2012, էջ 44): Ժամանակակից մանկավարժության մեջ բովանդակությունը փոփոխվում է՝ դիտարկելով ուսումնառությունը որպես անընդհատ փոփոխվող և զարգացող գործընթաց, որը բերում է բովանդակության ուսուցման նոր մեթոդների կիրառման: Ուսուցման նման եղանակներից է համակցված ուսուցումը:

Համակցելով բովանդակության հաղորդման սինխրոն (համաժամանակյա) և ասինխրոն (տարաժամանակյա) եղանակները և օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիական

նորամուծությունները համակցված ուսուցումը կարող է արդյունավետ կիրառվել բարձրագույն ուսումնական հաստատություններում «Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման ընթացքում, որը ուսանողների ընդհանուր և մասնագիտական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը նպաստող գործընթաց է:

Սույն հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել համակցված ուսումնառության կիրառության արդյունավետությունը «Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման գործընթացում:

Հետազոտության **խնդիրներն** են՝

- Ուսումնասիրել բարձրագույն ուսումնական հաստատություններում համակցված ուսուցման կիրառության արդյունավետությունը,
- Բացահայտել «Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման գործընթացում համակցված ուսուցման ներդրման հնարավորությունները,
- Ուսանողների և մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսների շրջանում իրականացված հարցումների միջոցով պարզել մասնագիտական առարկաների դասավանդման գործընթացում առկա խնդիրները և համակցված ուսուցման միջոցով գտնել այդ խնդիրները հաղթահարելու ուղիներ:

#### **Հետազոտության արդիականությունը**

Հետազոտությունն արդիական է, քանի որ «Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունները համեմատաբար նոր են, և ուսումնասիրված չեն այս մասնագիտությունների ուսուցման գործընթացում կիրառվող մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների, ուսուցման մեթոդների և եղանակների արդյունավետությունը: Մասնագիտական կոմպետենցիաներ ձևավորելու համար անհրաժեշտություն է առաջանում համակցել ավանդական մանկավարժական տեխնոլոգիաները նորարարական մոտեցումների հետ: Ուսուցման նման արդիական եղանակ է համակցված ուսուցումը:

#### **Հետազոտության մեթոդները**

Սույն հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծություն, համադրման և հարցման մեթոդները:

**Համակցված ուսուցումը՝ որպես «Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման արդյունավետ եղանակ**

Համակցված ուսուցումը տարածում է գտնել դեռևս 1990ական թվականներին: Այն դիտարկվում էր որպես տեխնոլոգիական բաղադրիչների ինտեգրմամբ ուսուցման գործընթաց լսարանային պայմաններում: Վերջինիս տարածումը պայմանավորված էր

ուսումնառողների ակնկալիքների, ժողովրդագրական և տեխնոլոգիական արագ փոփոխություններով:

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել «համակցված ուսուցում» հասկացության մի շարք սահմանումների: Մույն աշխատանքում կանդիդատական քանիսին:

«Համակցված ուսուցում» հասկացությունը սահմանվում է որպես կրթական նպատակին հասնելու համար տարբեր ուսուցման մեթոդների ու հնարների համադրում, որն իր մեջ ներառում է հետևյալ չորս կետերը.

- կրթական նպատակին հասնելու համար համատեղել առցանց ուսուցման տեխնոլոգիական գործիքները,
- օպտիմալ վերջնարդյունք ստեղծելու համար համատեղել մանկավարժական տարբեր մոտեցումները օգտագործելով տեխնոլոգիական հնարավորությունները կամ առանց վերջիններիս կիրառման,
- համատեղել կրթական տեխնոլոգիական գործիքները իրական աշխատանքային առաջադրանքների հետ (Driscoll, 2002):

Համակցված ուսուցումը նկարագրվում է նաև՝ հիմք ընդունելով անցանց ու առցանց ուսուցման տոկոսային հարաբերակցությունը: Որոշ հեղինակների կարծիքով բովանդակության 30-70% պետք է հաղորդվի առցանց (Allen, Seaman, Garrett, 2007): Հակառակ այս տեսակետին՝ Գարիսոնն ու Կանուկան (2004) նշում են, որ անցանց ու առցանց ուսուցման վրա ծախսվող ժամանակը չափելը ամենակարևոր պայմանը չէ: Ավելի կարևոր է այս երկու տարբերի արդյունավետ համադրումը:

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել նաև «հիբրիդային ուսուցում» և «Հայֆլեքս»<sup>1</sup> հասկացությունների համադրությունը, որը ենթադրում է ավանդական կրթության ձևի համալրումը հեռավար կրթական տեխնոլոգիաներով, որի արդյունքում լսարանը վերածվում է բազմաչափ ուսումնական տարածքի և բացառիկ հնարավորություններ է ընձեռում անհատական և կոլեկտիվ կրթության համար (Մանուկյան, 2021, էջ 218): Սակայն այս մոտեցումը լիարժեք չի ներկայացնում համակցված ուսուցման էությունը:

Համակցված ուսուցումը հաճախ նաև ասոցացնում են վերջինիս մոդելներից մեկի՝ շրջված դասարանի հետ, սակայն հարկ է նշել, որ այժմ առանձնացնում են համակցված ուսուցման յոթ հիմնական մոդել (կայանի ռոտացիա, լաբորատորիային ռոտացիա, անհատական ռոտացիա, շրջված դասարան, Ֆլեքս, ա-լա-կարտ, հարստացված վիրտուալ մոդել) (Clark, 2023, p 210):

Այսպիսով՝ «համակցված ուսուցում» հասկացության սահմանումների ընդհանրությունն է ուսուցման տարբեր տեխնոլոգիաների համադրումը: Համակցված ուսուցման ընթացքում սովորողը մասամբ սովորում է առցանց ուսուցման միջոցով՝

---

<sup>1</sup> անգլերեն «hybrid» (հիբրիդային) և «flexible» (ճկուն) բառերի համադրություն

ունենալով իր վերահսկողության տակ սովորելու ժամանակը, վայրը, ձևը և/կամ տեմպը:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների ուսումնական կատարողականի և բավարարվածության աստիճանի բարձրացումը կրթության համակարգերի հիմնական խնդիրներից մեկն է: Յուրաքանչյուր սովորողի անհատական կրթական պահանջումներին դասընթացները հարմարեցնելու համար դասավանդողները պետք է իրականացնեն ուսանողների ընդունակությունների հավաստի ուսումնասիրություն:

«Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտություններով սովորող ուսանողները հաճախ տարբերվում են ըստ իրենց նախնական գիտելիքների մակարդակի, հետաքրքրությունների, սոցիալական դիրքի և այլն: Դասավանդողները կարող են լսարանային պայմաններում որոշակի տեղեկություն ստանալ ուսանողների կարողությունների ու հմտությունների մասին, սակայն երբեմն բախվում են որոշ դժվարությունների (օրինակ՝ խմբում ուսանողների մեծ թիվը): Մյուս դեպքերում դասավանդման ընթացքում բարդ է ցուցաբերել անհատական մոտեցում:

Թեև բարձրագույն կրթության ոլորտում համակցված ուսուցման ներդրման առումով կան որոշակի մարտահրավերներ, սակայն մի շարք հետազոտություններ փաստում են, որ անցանց ուսուցման համակցումը առցանց տեխնոլոգիական գործիքների հետ որոշ մասնագիտական առարկաների դասավանդման գործընթացում տալիս է դրական արդյունք:

Այսպիսով, հաշվի առնելով համակցված ուսուցման յուրահատկությունները և «Զբոսաշրջություն» ու «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման առանձնահատկությունները կարելի է առանձնացնել նման ուսուցման հետևյալ դրական կողմերը.

- Համակցված ուսուցումը նպաստում է անկախ և համագործակցային ուսումնասիրությանը, ազատ և ինտերակտիվ երկխոսությանը:

- Տեխնոլոգիաները օգնում են հաղթահարել դասավանդման ընթացքում ծագած այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են խմբերում ուսանողների մեծ թիվը, մշակութային, տարիքային տարբերությունները, նախնական գիտելիքի մակարդակների, անհատական հմտությունների ու կարիքների տարբերությունները:

- Ժամանակակից տեխնոլոգիական գործիքների կիրառումը համակցված ուսուցման ժամանակ ուսանողներին հնարավորություն է տալիս ուսումնասիրել բովանդակությունը լսարանից դուրս՝ իրենց հարմար ժամանակ, նախընտրած վայրում և անհատական տեմպով: «Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման ընթացքում համակցված ուսուցումը հնարավորություն է տալիս ավելի ցածր վերջնարդյունքների (հասկանալ, հիշել) հասնել առցանց ուսուցման, իսկ ավելի բարձր վերջնարդյունքների (ստեղծել, կիրառել, վերլուծել)՝

անցանց ուսուցման ընթացքում՝ հնարավորություն ընձեռելով գործնական և համագործակցային դասախոսությունների համակցման:

• Ժամանակակից տեխնոլոգիական գործիքների կիրառումը համակցված ուսուցման շրջանակներում կարող է մեծացնել ուսանողների ներգրավվածության մակարդակը՝ ներգրավելով, օրինակ, ինտրովերտ ուսանողներին:

Չնայած մի շարք դրական կողմերին կարելի է առանձնացնել նաև որոշ բացասական կողմեր.

• Բարձրագույն ուսումնական հաստատությունների և ուսանողների անձնական տեխնիկական միջոցների ոչ բավարար քանակը կամ ոչ բավարար SS գիտելիքները:

• Մնմիջական արձագանքի բացակայությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ ուսանողներ չեն կարողանում կապ հաստատել դասախոսների հետ վիրուալ շփման միջոցով, ինչը հանգեցնում է նրան, որ վերջիններս իրենց այլևս չեն համարում խմբի մի մաս (Vonderwell, 2003, p. 77-90):

• Մշակութային և սոցիալական առանձնահատկությունները (սեռ, ազգային առանձնահատկություններ): Որոշ մասնագետներ կարծում են, որ հասակակիցների հետ սոցիալական փոխազդեցություն և սոցիալ-գզայական հարաբերություններ հաստատելը ավելի հեշտ է անցանց, քան առցանց ուսուցման ժամանակ (Paechter and Maier, 2010, p. 13): Նման փոխազդեցությունը հատկապես կարևորվում է «Չբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագտությամբ սովորող ուսանողների շրջանում:

#### **Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «Չբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման փորձի դիտարկում**

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում «Չբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման փորձը ցույց է տվել, որ ուսանողների մի մասը ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատություն որոշակի մասնագիտական գիտելիքներով կամ աշխատանքային փորձով: Ավանդական, անցանց ուսուցմանը խոչընդոտող գործոն է նաև այս մասնագիտություններով սովորող ուսանողների մեծ թիվը: Բացի այդ «Մերվիս» և «Չբոսաշրջություն» մասնագիտությունների մի շարք առարկաների ավելի արդյունավետ դասավանդման համար անհրաժեշտ է իրականացնել արտալսարանային դասեր, այցեր և դաշտային պարապմունքներ:

Վերոհիշյալ կետերը հաշվի առնելով՝ կարիք է առաջանում առավել խորը ուսումնասիրել համակցված ուսուցման կիրառման արդյունավետությունը «Մերվիս» և «Չբոսաշրջություն» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման գործընթացում:


Համակցված ուսուցման կիրառության արդյունավետությունը պարզելու համար սույն հետազոտության շրջանակներում իրականացվել են հարցումներ՝ ԲՊՀ «Մերվիս» և «Զբոսաշրջություն» մասնագիտություններով սովորող ուսանողների և մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսների շրջանում (2022-2023թթ.): Հարցմանը մասնակցել է 127 ուսանող (բակալավի կրթական ծրագրի 2-րդ կուրսից մինչև մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս) և «Զբոսաշրջություն և սերվիս» ամբիոնի 15 դասախոս: Ամփոփելով արդյունքները՝ կարող ենք առանձնացնել հետևյալ կետերը.

- Հարցմանը մասնակցած ուսանողների մեծ մասը նախընտրում է անցանց ուսուցման եղանակը (Տե՛ս Գծապատկեր 1)՝ անցանց ուսուցման հիմնական թերությունն համարվելով առերես շիման ու մոտիվացիայի բացակայությունը (Տե՛ս Գծապատկեր 2): Մա կարելի է կապել նաև տարիքային և սեռով պայմանավորված առանձնահատկությունների հետ, քանի որ հարցմանը մասնակցած ուսանողների մեծ մասը 18-20 տարեկան (59,8%) իգական սեռի (94,5%) ուսանողներ են:

### Գծապատկեր 1: Նախընտրելի ուսուցման եղանակը ըստ հարցմանը մասնակցած ուսանողների

Կնախընտրելի՞ք ունենալ համակցված դասընթացներ (առցանց և անցանց ուսուցման գործիքների համադրում) մասնագիտական առարկ...մար և իՆչ հարաբերակցությամբ:


127 responses



### Գծապատկեր 2: Անցանց ուսուցման հիմնական թերությունները ըստ հարցմանը մասնակցած ուսանողների

Որո՞նք եք համարում առցանց ուսուցման հիմնական թերությունները:

127 responses




Դասախոսների մեծ մասը նույնպես նախընտրում է անցանց ուսուցումը, սակայն բավական մեծ տոկոս են կազմում այն դասախոսները, ովքեր նախապատվությունը տալիս են համակցված ուսուցմանը (Տե՛ս Գծապատկեր 3): Դասախոսների համար խոչընդոտ է համարվում օբյեկտիվ գնահատում իրականացնելը (Տե՛ս Գծապատկեր 4): Այս խնդիրը սակայն հնարավոր է լուծել՝ հարմարեցնելով ուսուցանվող նյութը առցանց հարթակներով մատուցելուն:

### Գծապատկեր 3: Նախընտրելի ուսուցման եղանակը ըստ հարցմանը մասնակցած դասախոսների

Կնախընտրելի՞ք, որ Ձեր առարկան դասավանդվեր համակցված ուսուցման մեթոդով:

15 responses




### Գծապատկեր 4: Առցանց ուսուցման հիմնական թերությունները ըստ հարցմանը մասնակցած դասախոսների



Որո՞նք են առցանց ուսուցման հիմնական թերությունները:

15 responses




Հարցման մասնակիցների շրջանում նաև մեծ տոկոս են կազմել այն մասնակիցները, ովքեր նախընտրել են ուսուցման 30% առցանց և 70% անցանց տարբերակը:

• Անցանց ուսուցման հիմնական թերությունների մեջ առանձնացվել են խմբերում ուսանողների մեծ թիվն ու անհատական վերլուծության և ուսումնասիրությունների համար նախատեսվող ժամանակի պակասը (Տե՛ս Գծապատկեր 5 և 6): Այն հարցին, թե արդյոք կցանկանային ունենալ ազատ գրաֆիկ մասնագիտական դասընթացների շրջանակներում հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, ուսանողների ճնշող մեծամասնությունը (63,8%) դրական է պատասխանել: Անցանց ուսուցման այս թերությունները վկայում են, որ դասընթացների ժամանակ անհրաժեշտ է անհատական մոտեցում, ինչը ուսանողների մեծ թվի դեպքում հնարավոր է իրականացվել համակցված ուսուցման որոշ մոդելների կիրառմամբ:


### Գծապատկեր 5: Անցանց ուսուցման հիմնական թերությունները ըստ հարցմանը մասնակցած ուսանողների

Որո՞նք են անցանց (դեմառոնեմ) ուսուցման հիմնական թերությունները:

127 responses



**Գծապատկեր 6: Անցանց ուսուցման հիմնական թերությունները ըստ հարցմանը մասնակցած դասախոսների**




• Հարցին, թե կարևորում են արդյոք նոր տեխնոլոգիական գործիքների կիրառումը մասնագիտական առարկաների դասավանդման գործում, հարցմանը մասնակցող ուսանողների մեծ մասը նշել է, որ դրանք կարևոր են նյութը ավելի լավ յուրացնելու համար (Տե՛ս Գծապատկեր 7):

**Գծապատկեր 7: Տեխնոլոգիական գործիքների կիրառման անհրաժեշտությունը մասնագիտական առարկաների դասավանդման ընթացքում ըստ հարցմանը մասնակցած ուսանողների**

Կարևո՞ր էք համարում նոր տեխնոլոգիաների կիրառությունը "Սերվիս" և "Չբուսաշրջություն" մասնագիտության առարկաների դասավանդման գործընթացում:

127 responses



Այսպիսով, ԲԳՀ «Սերվիս» և «Չբուսաշրջություն» մասնագիտություններով սովորող ուսանողների մեծ մասը գիտակցում է անհատականացված ուսուցման անհրաժեշտությունը, սակայն կողմ չէ առցանց ուսուցմանը: Իսկ դասախոսների մեծ մասը նշում է, որ այս մասնագիտությամբ սովորող ուսանողների համար անհրաժեշտություն է գործնական աշխատանքների և հետազոտություն իրականացնելու համար նախատեսվող ազատ ժամանակը: Այս ամենը հաշվի առնելով՝

կարելի է եզրակացնել, որ համակցված ուսուցման կիրառությունը կարող է այլընտրանք լինել անցանց կամ առցանց ուսուցմանը, և նպաստել ինչպես ուսանողների պահանջմունքների բավարարմանը, այնպես էլ օգնել դասախոսներին հասնել ավելի լավ արդյունքների:

### **Եզրակացություն**

«Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման գործընթացում համակցված ուսուցումը պահանջում է մանրակրկիտ վերլուծություն, որտեղ սովորողները, ուսուցման ձևը, հաստատության մշակութային միջավայրը և հասանելի ռեսուրսները պետք է համապատասխանեցվեն ուսուցման մեթոդների հետ:

«Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական դասընթացներում համակցված ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է պատկերացնել դասընթացի ամբողջ հետագիծը և վերուծել, թե սահմանված վերջնարդյունքների հասնելու համար ուսուցման որ տեխնոլոգիաներն են արդյունավետ: Սահմանված վերջնարդյունքների հիման վրա անհրաժեշտ է վերակառուցել դասընթացի կառուցվածքը՝ նախապես ուսումնասիրելով սովորողների սոցիալ-մշակութային առանձնահատկությունները, ՏՏ գիտելիքների տիրապետման մակարդակը, սեռն ու տարիքը, գնահատելով առկա ռեսուրսները և հաշվի առնելով համապատասխան ծախսերը:

Համակցված ուսուցման գործածությունը ժամանակատար է, սակայն արդյունավետ ներդրումը «Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների ուսուցման գործընթացում կարող է բերել դրական արդյունքների:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

### **REFERENCES**

1. Մանուկյան Ն.Հ., Հեռավար կրթության ժամանակակից մարտահրավերները, Ծիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան 2021, <http://shsu.am/media/journal/2021n2b/25.pdf>  
Manoukyan N.H., Heravar krtutyanyan jhamanakakic martahravernery, Shiraki M. Nalbandyani anvan petakan hamalsaran 2021 (In Armenian)
2. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան 2012  
Petrosyan H., Mankavarjhakan jhamanakakic teknologianer, Yerevan 2012 (In Armenian)
3. Allen, I. E., Seaman, J. & Garrett, R. (2007). Blending in: The extent and promise of blended education in the United States, The Sloan Consortium, <http://sloanconsortium.org/publications/survey/blended06> (24.07.2022).

4. Clark, D., Learning Technology. A complete guide for learning professionals, London 2023.
5. Driscoll, M. (2002), Blended learning: Let's get beyond the hype, E-learning Magazine, [https://www.researchgate.net/publication/286029739\\_Blended\\_learning\\_Let's\\_get\\_beyond\\_the\\_hype](https://www.researchgate.net/publication/286029739_Blended_learning_Let's_get_beyond_the_hype)
6. Garrison, D. R., & Kanuka, H. (2004), Blended learning: Uncovering its transformative potential in higher education. Internet and Higher Education, <https://biblio.ugent.be/publication/6905076/file/6905079>
7. Paechter, M., Maier, B. (2010), Online or face-to-face? Students' experiences and preferences in e-learning. Internet and Higher Education, [file:///C:/Users/User/Downloads/1-s2.0-S1877042815023460-main%20\(1\).pdf](file:///C:/Users/User/Downloads/1-s2.0-S1877042815023460-main%20(1).pdf)
8. Vonderwell, S. (2003), An examination of asynchronous communication experiences and perspectives of students in an online course: A case study. Internet and Higher Education, 2003, [file:///C:/Users/User/Downloads/1-s2.0-S1877042815023460-main%20\(1\).pdf](file:///C:/Users/User/Downloads/1-s2.0-S1877042815023460-main%20(1).pdf)

**АННА Р. МИНАСЯН - ЭФФЕКТИВНОСТЬ ВНЕДРЕНИЯ СМЕШАННОГО ОБУЧЕНИЯ В ПРЕПОДАВАНИЕ ПРОФЕССИОНАЛЬНЫХ ДИСЦИПЛИН В РАМКАХ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОГРАММ "ТУРИЗМ" И "СЕРВИС"**

***Ключевые слова:** смешанное обучение, персонализированное обучение, онлайн- и офлайн-обучение, образовательные технологии.*

В данной статье исследуется смешанное обучение как инновационный и персонализированный подход, нацеленный на развитие профессиональных компетенций.

Анализируется эффективность смешанного обучения в контексте преподавания профессиональных дисциплин в высших учебных заведениях, особенно в рамках образовательных программ по специальностям "Туризм" и "Сервис".

Опрос, проведенный в рамках данного исследования, выявил ключевые трудности в процессе обучения, которые могут быть успешно преодолены посредством применения комбинированного подхода. Это подчеркивает потенциал смешанного обучения как эффективной стратегии для формирования необходимых профессиональных навыков и умений.

**ANNA R. MINASYAN - EFFICACY OF BLENDED LEARNING IN TEACHING PROFESSIONAL SUBJECTS WITHIN EDUCATION PROGRAMS IN "TOURISM" AND "SERVICE"**

**Keywords:** *blended learning, personalized learning, online and offline learning, educational technology*

This article introduces blended learning as a personalized, student-centered approach aimed at developing professional competencies. It examines the effectiveness of using blended learning to teach professional subjects in higher education programs related to “Tourism” and “Service”.

The survey conducted as part of the study identified the primary challenges encountered in teaching professional subjects, most of which can be addressed through the implementation of blended teaching methods.

**Ներկայացվել 04.03.2024 թ.**

**Է՝**

**Գրախոսվել է՝ 05.05.2024 թ.**